

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՄԲԱԳՐԱԳԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈԼԱՏ

Բ. ՇՐՉԱՆ

ԹԻԻ 44

1899 ՅՈՒՆՈՒԱՐ 23

Ամեն տեղի համար Տարեկան կանխիկ **50** դանեկան, Վեցամսեայ **26**, իսկ եռամսեայ, **13** դանեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ **15** ֆրանկ: Թղթասարի ծախքը տարբերութեան կը վերաբերի: Հասք **40** փարայ: Գաւառներէ բօսքի բուլ ալ կ'ընդունուի **100** դրուցի տեղ **105** դրուց:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.—Մեր նոր Ձեռնարկը:

Ղ. ԲՈԼԱՏ.— Ծաղկեբանական պէտպիսութիւններ. Վարդը. Մշակութիւն եւ Իսկուծեան պատրաստութիւնը:

Ղ. ԲՈԼԱՏ.— Շերամաբուծութիւնը Բասթէօսեան դրութիւնով. Մակաբուծային Փոխանցիկ Հիւանդութիւններ. Փտախտ:

Հերմիտէ.— Ամբակում աղային բանթալներ. (մեր բարձրէն իրական պատմութիւն):

Ղ. ԲՈԼԱՏ.— Ճարտարարուեստական. Ներկարարութիւնը: Բուրդ:

ՆԱՄԱԿՆԵՐ ԵՒ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ առ Խմբագրութիւն

Ա. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ.— Գիտական Խնդիրներ:

Թղթակցութիւն, Ազդեցիկ.

Հատը 40 փարայ

ՏՊԱԳՐՔ ԳՐԻԳՈՐ Պ. ԳԱՅՍԷՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապ - Արի ճատաւսի, Թիւ 4

ՅԱՆՎԱՐԻ ԹԻՒՆ

Հօգան. — Վ. Ս. Պաղտատեան էֆ. —
Շնորհակալութիւն ձեր համակրանաց. բա-
ժանորդ արձանագրած ենք:

Ա. Գ. Շէհիր. — Գ. Ս. Էօլմէզեան էֆ. —
Նամակ զրկած ենք:

Զօրլու. — Հայրիկեան Աշոտ էֆ. — Նոյնպէս:
Իգնիմիտ. — Արրահամ Յ. Առաքելեան էֆ.
— Ստացած ենք նամակնիր:

Ա. յնթապ. — Ն. Գ. Նիկողոսեան էֆ. —
Ստացած ենք նամակնիր. բաժանորդ արձա-
նագրած ենք Համեստ. Օր. Հայկանուշը. —
Վայելչազարդութեան Բաթինի հրատարակու-
թիւնը, այն ատեն տեղի պիտի սեննայ, երբ
բաժանորդաց կանխորոշ թիւը լրանայ:

Պանտրիա. — Ս. Մարեան էֆ. — Նամակնիր
ստացած ենք:

Սիւրիւրի. — Ս. Կ. Մալաքեան էֆ. — Նա-
մակ գրուած է ձեզ. Պատասխանին կ'սպա-
սենք:

Գուշ-Ատա. — Կ. Պ. Ք. — Տակաւին Ու-
սումնական Խորհուրդը պէտք եղած քննու-
թիւնը չէ կատարած եղեր:

Պարսիզակ. — Ն. Փափազեան էֆ. — Ղըր-
կուեցան 37 և 38 թիւերը:

Տիարպէթիր. — Պ. Վ. Տէր Գարրիշեան
էֆ. — Ստացանք ձեր բաժնէ գինը Օհան էֆ.
Աշճեանէ. — Նախորդ շրջանի լոյս տեսած թի-
ւերը կը զրկուին՝ գին 60 զուրուշ, հաճեցէք
առաջին առթիւ իմաց տալ:

Ատաբազար. — Կ. Սեմիզեան էֆ. — Ստա-
ցած ենք նամակնիր. կը պատասխանենք.
տնհոգ եղիք:

Մանրա. — Մ. Երկանեան էֆ. — Նոյնպէս:

Գարթալ. — Ե. Յ. Էթմէքճեան. Նոյնպէս:

ՄԷՆԱՅԻՒ ՈՒՄՈՒՄԻՅԷ

Պատի թէչքիւրնամէմ օլտուր քի,

Քէնտիմ անապը Իսթանպուլու օլտալ, շալ-
ղըճը էսնաֆընտան Արտաշէս Մեքոնեան,
մագսէտը աճիլանէմ օլտուրքի՝ Խիւտանէ-
քէրտէ, Ալլահ քիմնէյէ չէքտիմէսուն, պուն-
տան պիր քաշ սէնէ ագտէմ կիրիֆթար օլտը-
ղըմ պէլ սօլուգլուղը վէ ֆրէնկի իլլէթի օլ-
գատար իշթիտաւ էլլէտի քի, գաշլարըմ վէ
քիրիբէրիմ տէօքիւլտի. չիմոյէ գատար՝
պիր չօգ մահալլէրտէ թէտալի օլտընմը իսէմ
տէ, մէգքիւր խաթալըղա պիր շարէճըղազ
պուլամամը իքէն, պու քէրքէ Զարէմպիհտէ

Պէհճիկէզ մահալլէսինտէ Հաճը Բեամիլէ հա-
նըմըն խանէսինտէ Տօպրուճանըն Քէօսթէնճէ
էհալիսինտէն Հիւսէին էֆէնտի նամ զաթըն
իլլէ մէգքիւրէ հագգընտա խիզագաթը թա-
միյէ վէ մէհարէթը քեամիլլէսի օլտուղը խապէր
վէրիմէսի իւզլէ, բէճա միննէթ պիր վաալը-
թա միւրաճաաթ իտէրէք, միւմսիլէյհին պու
պապտէ խիզագաթը թամիյէ վէ մէհարէթը
քեամիլլէսիլլէ օլտընան թէտալիտէն, պի
լութֆը թէտալ, պիր գաշ կիւն զարֆընտա
մահուտ խաթէլիքտէն քեամիլլէն չիֆաեապ
օլտուղըմ կիպի, ապա գահմէթ վէ քէտէր
չէքմէյէրէք թահլիս օլտուղըմ, Ալլահ չօգ
չիւքիւրլէր օլտուլ, տօղրուսը թազէ հայեաթ-
պաիշ օլտուլ, վէ օլպապտէ մէգքիւր է-
ֆէնտիին սուհուլէթը սէրիյէ շայանը թագ-
աիր օլտուղընտան, իւզու թէչէքքիւրնամէմ
իթա վէ իւն իտէրիմ: Սամաթիալը

ԱՐՏԱՇԷՍ ՄԵԼՔՈՆԵԱՆ

ԳԱՂ. ՀԱՅ. ԳՈՐԾՆ. ԳԻՏՈՒԹԵԱՆՅ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԱՐԱՆ

Գործ. Հ. ՍԻՄԵՈՆ ԵՐԱՄԵԱՆՍԻ

Այն բառգիրքը կը խօսի աշխարհիկ լեզուով եւ
գործնական ոճով խօշորութեան, Վերաբուժեան.
Առողջաբանութեան, շարտարաբանութեան, բնաբա-
նութեան, ֆիզիպի, գեղեցու. բնական պատմու-
թեանց, Աստղաբանութեան, Իրկագործութեան եւ
այլ գիտութեանց վրայ:

Ըստ կարելոյն ամենայն խնամք տարուած է բա-
ռերու ճշգրութեան: Ընդարձակ բացատրութիւններ
կուտայ իւրաքանչիւր նիւթի վրայ, ի բաց առեալ ա-
մէնէն անգործածական նիւթերն. իսկ կարեւոր նիւ-
թոց վրայ եղբորդ օգտակար տեղեկութիւնք անպա-
կաս են: Այս աշխատութիւնը որպէս զի յինքեան կա-
տարեալ ըլլայ, հեղինակը իրեն առաջնորդ բռնած է
շատ մը հանրագիտական եւրոպական բառարաններ:

Գիտական բառերու մասին առաջնակարգ թի-
կունք եղած է այս գործիս Վ. Հ. Քաջունեայ Հանր-
գիրքի ընդարձակ ընտիր բառագիրքի, իսկ բուսոց մա-
սին Վ. Հ. Ալիշանի Հայ-բան. Աւելորդ չէ համար-
ուած գիմէլու նաեւ մասնաճիւղերու վրայ խօսող գրք-
քերու օգնութեան:

Հեղինակը խնամք եւրոպական ընտիր գործերէ քա-
ղելով ամենէն գործնական եւ օգտակար գիտութիւններն
գտնողք խմբագրած է մի հատորի մէջ՝ զարգարելով
ամէն ճիւղի վերաբերեալ գեղեցիկ պատկերներով:

Այն գործը պիտի լրանայ 60 աւթածալ թերթերու
մէջ, իւրաքանչիւր թերթի երկայնութիւնն է 24 հա-
րիւրդամագր, լայնք 16 հրմ: գրերն մանր եւ գիւր-
բէթեան լին:

Իւրաքանչիւր թերթի բաժանորդագինն է 20 սան-
թիմ, ամբողջ գիրքն 10 ֆրանք (—4 ռուբլի, 2 տոլ-
լար) գոր կանխիկ ներփակեալ տոմսակաւ պէտք է փա-

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم

ԽՐԱԳՐԱԳԵՏ - ՏՆՕՐԷՆ

Գ. ՐԱԼԱՏ

Բ. ՇՐՁԱՆ

ԹԻԻ 44

1899 ՅՈՒՆՈՒԱՐ 23

ՄԵՐ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿԸ

Հանրագիտակի պարունակութեանց չարքին մէջ կանանց վայելչադարդութեան բաժին մ'եւս աւելցնելու դադար փար մը յղացանք, որու նպատակը պիտի ըլլայ, հաջիգական սեռին եւ ոգտակար ծառայութիւն մը մատուցանել: Հարկ չի կայ կարծեմ կրկնել հոս թէ թ'նչ տեսակէտով մեր այս թերթը ոգտակար պիտի կրնայ ըլլալ, քանի որ այդ մասին ընդարձակօրէն մեր ծրագիրը պարզած ենք արդէն: Որոշած ենք նաեւ երբ այդ ոգտակար ձեռնարկը գործարկել սկսինք, թերթիս կրկին ծաւալ մը տալով, ամէն շաբթու մեր ընթերցող հասարակութեան՝ հիմնականէն աւելի առատ, ճշիգ, այլազան, եւ մանաւանդ ոգտակար նիւթեր մատակարարել:

Մեր այս գաղափարը հրապարակ նետած օրերէն ի վեր, երեք ամիսներ անցան ահա, եւ տակաւին չենք կրցած իւրադործել զայն: Թէև՝ մենք կը փափաքէինք, Ամանորի առթիւ անակնկալ նը-

ւէր մ'ընել մեր ընթերցողներուն, վայելչադարդութեան բաժնի առսջին թիւն այդ օրն իսկ ներկայացնելով իրենց:

Թերթիս ընթերցողներէն շատեր, արդէն անհամբեր անոր երեւման կ'սպասեն, եւ շարունակ այդ իմաստով ալ գրութիւններ կ'ընդունինք, ինչպէս եւ բերանացի թերագրութիւններ, «Դուք հրատարակեցէք, ժողովուրդը երբ իր աչքով տեսնէ, կը համոզուի եւ խելոյն բաժանորդ կը գրուի. երբէք բաժանորդագրութեան թւոյն լրանալուն մի՛ սպասէք. ելն. ելն.»-

Ներկայ թերթիս հրատարակութեան ձեռնարկելէ տուաջ, շարունակ լրագիրներու մէջ կը կարդայինք, ինչպէս եւ շատ մը բերանացի ըսողներ ալ գտնուած են, թէ՛ «Մասնագիտական թերթ մը անգամ չունինք, որ ժողովուրդը ոգտուի: Մեր բոլոր պարբերականներու տեղ պէտք է ունենանք զիտութեանց, արհեստներու եւ երկրագործութեան վրայ խօսող թերթեր, որոնք՝ տարակոյս չի կայ թէ ժողովուրդէն մեծ ընդունելութիւն պիտի գտնեն. ելն»:

Այդ համադրումով էր որ Հանրագիտակի հրատարակութեան ձեռնարկեցինք, և փոխանակ կարգ մը տեսութիւններով թերթը լեցնելու, և մեր մտքէն անցած նիւթերու վրայ խօսելու, հարց-պատասխանի գրութիւն մը հաստատեցինք, որպէս զի՝ շարունակ այժմեութիւնով զբաղած ըլլանք. և թերթի ժողովուրդի անմիջական պէտքերու գոհացում տալու վիճակին մէջ գտնուի: Ինչպէս կը տեսնուի արդէն, այսօր 60է աւելի հարցումներ ուղղուած են մեզ, զրեթէ ամենուն ալ պատասխանուած է, և հազիւ թէ մէկ քանիներ կան, տակաւին անպատասխանի մնացած, որոց ևս անշուշտ գոհացում պիտի արուի իրենց կարգին: Այդ պատասխանները կրնայինք թէ և մէկ քանի տողերու մէջ ապա լակնակոն ունի: Բայց որովհետեւ մեր նպատակը ուղղակի կերպով ժողովուրդին օգտակար ըլլալ է, ուստի՝ ամէն հարցումի ալ խզմամբէն պատասխանել, մեզի սկզբունք ըրած ըլլալով, մանրամասն բացատրութիւններ տալէ ետ չենք կեցած:

Բայց զարմանալի չէ՞ որ, մինչև հասա՞նք, ինքզինքնիս խաբուած կը գտնանք և ի զուր կը սպասենք տակաւին մեր ժողովուրդէն, թերթի հանդէպ այն երեւակայական ընդունելութիւնը:

Ոմանք կ'ըսեն թէ՝ մեր ժողովուրդը ընթերցասէր չէ, բայց մենք այդ կարծիքէն չենք. անոնք ինչ կ'ըսեն չեն ընենք, միջոցը կը գտնան թերթ մը կարդալու, միայն թէ վճարելու կը դժկամակին. ահա հո՞ւ է գողտնիքը. և ասոր համար է որ թերթերը յարատեւութիւն չեն գտնար, քանի որ իրենց աշխատութիւնը արժանաւորուպէս չի վարձատրուիր, քանի որ իրենք ահագին ծախքեր կ'ընեն, և գէթադժոքաբար փոխարէն վճարումները ո՛չ կանոնաւոր կ'ըլլան և ո՛չ ալ գոհացուցիչ:

Մեր ժողովուրդը՝ բանաստեղծական բաներ կը փնտռէ եղեր ամէն գրու-

թեանց մէջ. աւելի կը սիրէ երեւակայութիւնը սնուցանել, քան փորը կշտացնել. Չենք ատեր բանաստեղծական գրուածները, և չենք ալ ըսեր թէ անոնք օգտակարութեան զուրկ են. բայց պէտք է նախ օրինաւորուպէս դրամ չահելու միջոցները գտնանք, և մեր ապրուստը ապահովելէ վերջ մեր բանաստեղծական ճաշակը կրթենք. մանաւանդ՝ երբ շուրջերնիս կը տեսնենք մեր դրացի ազգերը, որոնք՝ գիտութեան և արհեստի չնարհու հարստութիւններ կը դիզեն, դէպի յառաջ կը դիմեն հոկայաբայլ, և զմեզ շատ մը բաներու մէջ հարկատու կ'ընեն իրենց:

Իրաց այս վիճակին մէջ, երբ կը տեսնենք որ մեր այս ձեռնարկը պէտք եղած քաջալերութիւնը չի գտներ, բոլոր մեր զոհողութիւնները՝ թողունք բարոյական մասը մէկ կողմ, այլ նիւթական զոհողութիւնները մանաւանդ. ինկատի չառնուիր, ի՞նչպէս վտտահինք միմիայն չոր խոստումներու, և անգամ մը ևս ահագին ծախքերու տակ մտնանք:

Մենք առանց քաջուելու և առանց կարմրելու՝ հրապարակաւ կը խոստովանինք մեր հարստութիւնը չըլլալը, և երբ այս հրատարակութեան ձեռնարկեցինք, արեւտեսական տողնապներու հետեւանօք՝ մեր կարողութեան շատ վեր կորուստներ տուած էինք արդէն. և ահա այս օրինակ պարագաներու մէջ, ամէն դժուարութիւն առ ոչինչ զրելով, ցարդ կը շարունակենք այս թերթի հրատարակութիւնը՝ աննկուն կամքով մը, զոհելով մինչև իսկ մեր զուակաց հացը, շահը, հանրութեան օգտին: Մեր այս ձեռնարկի մէջ և ո՛չ մէկ մեծատուն հարուստի մը ձեռնաւութիւնը չենք վայելած. մեր յոյսը ժողովուրդին վրայ դրած ենք ամենայն իրաւունքով, քանի որ ինքզինքնիս անոր նուիրած ենք. ուստի՝ իրաւունքով պիտի պահանջենք միշտ ժողովուրդէն որ, թէ մեր զոհութիւնները ինկատի առնելով, և թէ

միւս կողմէն իր շահը և օգուտը մտածելով, իր կողմանէ պէտք եղած աջակցութիւնը չի զլանայ մեզ. որպէս զի մենք ալ մեր թերթի նիւթական վիճակը օր ըստ օրէ բարւոքելով, և զմեզ քաջալերուած տեսնելով, ի վերեւ յիշուած ծրագիրը գործադրելու փութանք:

Այսօր՝ ինչպէս ըսինք, երրորդ ամիսը լրացած է Վայելչազարդութեան Բաժին մը հրատարակելու գաղափարնիս յայանենէս ի վեր, բայց տակաւին 100ի չափ բաժանորդ միայն արձանագրուած են, մինչդեռ մենք կը պահանջէինք դոնէ 300. Թէև այսօր՝ կը հաւաստեն զմեզ՝ 500է աւելի անձինք, միայն Պօլսոյ մէջ, անհասկերութեամբ կսպասեն մեր ձեռնարկի իրադործման, և բաժանորդ պիտի գրուին, երբ թերթը լոյս տեսնայ: Բայց ասոնք՝ մենք առայժմ չոր խոստումներ միայն կը նկատենք. և չենք փորձուիր անգամ մ'եւս մեր հիմերը աւազի վրայ դնելով գործի ձեռնարկելու. այլ պիտի սպասենք որ անպատճառ մեր որոշած թիւը լրանայ: Վայելչազարդութեան Բաժինի հրատարակութիւնը արտասովոր ծախքերով կարելի է երևան բերել. ամէն բան կարգադրած ենք կանուխէն. ինչ որ ուրիշ առթիւ ըսած ալ ենք արդէն. թերթը պիտի տանք մեր բաժանորդաց ԽԻՍՏ ԽԻՆԱՄԵԱԼ տպագրութիւնով, և պատկերներու որոշ և ճշգրիտ նմանութեամբ. ինչպէս և ձեւագիտութեան և ուրիշ կանացի և սնական ձեւաբուերաներու և զբաղւելներու վերաբերեալ ամէն տեսակ պարունակութիւններ: Բայց 100ի չափ բաժանորդներու համար միայն այդպիսի գործի մը ձեռնարկել խոհեմութիւն չէ անշուշտ, քանի որ շարժութեան 10 ոսկիէ աւելի նախնական ծախքի մը վրէ կարօտի այդ թերթի հրատարակութիւնը:

Ահա՛ այս միակ պատճառաւ է որ ցարդ յետաձգած ենք Վայելչազար-

դութեան Բաժնի հրատարակութիւնը, մտածելով որ աւելի ազէկ կ'ըլլայ, գործը հաստատ և որոշ հիմերու վրայ դնելէ վերջ՝ ձեռնարկելով յարաւեւելը, քան անորոշ և անվաւեր խոստումներու վրատահելով, ասուպի մը պէս փայլիլ ու մարիլ: Լաւ է անագան քան երբեք:

ԾԱՂԿԵԲԱՆԱԿԱՆ ՊԵՍՊԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Վ Ա Ր Դ Ը

ՄՇԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՍԿՈՒԹԵԱՆ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

(Հրատարակւած է 1874 թ. 43)

Գրգանդի մէջ երկու տեսակ վարդ կը մշակուի. մին սպիտակ վարդը, իսկ միւսը բուն կարմիրը:

Սպիտակ վարդը թէև կարմիրէն շատ տակի խակութիւն կուտայ, բայց ստորին տեսակէ ըլլալուն, թէ՛ քիչ կը մշակեն, և թէ թորանոցի մէջ դնելէ առաջ, ուշադրութեամբ կը գտնեն, եթէ շատ խառնուած գտնուի:

Վարդետունկը գրեթէ ամէն տեսակ հողերու մէջ կը յարմարի թէև, բայց ամենուն մէջ ալ աճումը հաւատարապէս ազէկ չըլլար: Կաւային կարծր հողերը, որոնց ներքնահողը ջուրի անթափանցիկ է. վարդի մշակութեան համար ամենէն անյարմարներն են. որովհետեւ՝ վարդի արմատները շատ փափուկ ըլլալուն, չեն կրնար հողը պատուելով անցնիլ, և հողին տակ գտնուած խոնաւութեան պատճառաւ կը փոփն և կը նեխին: Թեթև հողերը՝ աւազային կամ կրային, ամենէն յարմարագոյններն են, բաւ է որ 40 հարմէթրի (սանթիմ) չափ խորութիւն ունենան գոնէ, և իրենց ներքնահողն ալ թափանցիկ ըլլայ. մանաւանդ՝ եթէ այս կարգի հողերը մերթընդ մերթ սղբուին, վարդետունկը իր ամենէն առատ հասոյթը կ'արտադրէ անոնց

մէջ: Կաւային և հարուստ հողերու մէջ, վարդեառունիքը առաջուց թէև լաւ կը բուսնի, բայց տակէ խարուերու չէ:

ՀՈՂԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ.— Վարդառունի ահմանուած հողը պէտք է 40 հար. մէթրի չափ խարութեամբ հերկել: Այս գարծողութիւնը պէտք է կատարել ըստ կարելւոյն աշնան մէջ, որ մինչև գարուն անկարկութեան համար պատրաստ գտնուի:

Գարնան առաջին օրերուն՝ հողը կը յարդարեն, և իրարմէ 1 մէթր կամ 1,20 հեռաւորութեամբ խրամներ (հէնտէկ) կը բանան. այս խրամներուն խառութիւնը 35—40 հար. մէթր կ'ըլլայ: Տնկարկութեան համար կը գործածեն 3—6 տարեան վարդեառունիքու արմատներէն ծնած բոլորները, զորս մայր տունէէն անջատելու համար, նախ՝ տունէին բոլորովը փորելով արմատը կը մերկացնեն, և սուր գործիքով մը, այդ նորածիլ բոլորներու խրամները (փէռչէմ) կը կարեն: Բոլորներուն վրայ մնացած արմատին աւելորդ մասերը կը կարեն, և միմիայն 3—4 հար. մէթրի չափ հասարակէկ ներքան (տապան) մը կը թաղուն: Երբ բոլորները ժամանակէն առաջ պատրաստուած ըլլան, խորձ խորձ կէս հորկանական դիրքով հողին տակ կը թաղեն միայն ծալքերին դուրս ձգելով: Տնկարկութիւնը կը կատարուի հետեւեալ կերպով: Բոլորները հորկանական դիրքով կը պառկեցնեն խրամներուն մէջ, և վրանին կը ծածկեն հողով, հողիւ թէ՛ 10 հար. մէթրի չափ մաս մը դուրս ձգելով. չի մոռնանք ըսելու թէ՛ բոլորները անկելէ առաջ, ծայրերին կը կտրեն և վրան գտնուած մանր և բարակ ծիւրը կը մաքրեն սուր գործիքով մը: Երբ այսպէս խրամներուն մէջը անկուին, հողը կը ճնշեն: Որովհետեւ նորատունի բոլորները արմատի խիստ փոքր մաս մ'ունեն, մոնք աղմատներու ծնունդը փութացնելու և դիւրացնելու համար, աղէկ կ'ըլլայ եթէ տընկուած ամեն իւրաքանչիւրի արմատին տակ, 1—2 ափ տղուտ (հինցած, փտած աղբ) դրուի:

Գրգանքը մէջ այս բոլորները պատրաստ կը ծախեն, 100 հատը 10—15 զրէի:

Այն երկիրներու մէջ, ուր ամառները չոր և տաք կ'ընէ, տնկարկութեան գործողութիւնը պէտք է կատարել աշնան մէջ, որ-

պէս զի՝ երաշտութիւնը սկսելէ առաջ՝ արմատները բռնած ըլլան արդէն:

Ապրիլի վերջերը երբ վարդատունը փառապար խոտերով ծածկուի, պէտք է լաւ հերկ մը տալ, և երկրորդ անգամ Յուլիսի վերջերը, Սեպտեմբերին հերկ մ'ալ տալով կը թաղուն այսպէս:

Վարդեառունիքը երրորդ տարիէն սկսեալ իր բերքը կուտայ: Ամէն տարի տունէկերը կը յատեն (պուտամագ) և մէկ կամ մէկուկէս մէթր բարձրութիւն կուտան տնոնց: Աշնան կամ գարնան սկիզբները, ամէն տարի, նորածիլ բոլորները կը կտրեն և կը նետեն, և կամ եթէ նոր տնկարկութեան մը պէտք ըլլայ՝ կը գործածեն: Բերքաւոր լրանալէն վերջ կը հերկեն հողը: Լաւ խնամուած վարդատան մը մինչև 10 տարի լաւ հասոյթ կրնայ արտադրել, ուրիշ վերջ պէտք է նորոգել:

ԻՍԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ.— Ինչպէս ըսինք արդէն, վարդի ծաղիկները քաղուելու պէս, խոյն կ'սկսին թորելու, որպէս զի՝ ժամանակ անցնելով, իրենց հոտը չի ցնդի: Իսկ երբ ժամանակ չունենան օրուան քաղուած վարդերը թորելու, այն ատեն՝ գտնոնք տեղ մը մարածելէ վերջ, վրանին ալ կը ցանեն, որ հոտը ցնդելու կ'արգիլէ: Այս մասին՝ կոկոնի բաժաններն ալ մեծ ներ կը խողան, որոնք նոյնպէս չեն թաղուր հոտը ցնդելու, երկրորդ՝ իրենց ներքին երեսը ցնդական իւրի կարեւոր մաս մը կը գտնուի, ինչպէս կը հաստատէ Մ. Մէնառ տնուն ֆրանսացի բուսաբանը, ըսելով թէ՝ ծաղիկնց պատարքը կը կազմուի իրենց բաժակի եւ թերթիկներու ներքին կողմը, որոնք լայի և օդի աղբեցութենէն պակասած են. բայց պէտք է նաեւ գիտնալ որ, խոհական իւր ուրիշ տակ կատարելագործեալ ըլլայ, այնչափ ծաղիկն արտաբոյրը նրբահատ և ազնիւ կ'ըլլայ: Եւ այս կատարելագործութիւնն ալ ծաղիկն հասունանալուն հետ կ'աղբում է. կանաչ ծաղիկները՝ ընդհանրապէս գարշահոտ կամ անտանելի արտաբոյր մը կ'ունենան: Եւ ասկէ կրնանք նաեւ հետեցնել թէ, բոլորովին թերթիկները բացուած ծաղիկն ալ իր արտաբոյրը կը կորսնցնէ, օդի և ըյովի աղբեցութեան ենթարկուելով:

Ամէն պարագայի մէջ ալ, այսինքն՝ վարդը թարմ կամ պահուած վիճակի մէջ, որն

ալ ըստ, թորելու ատեն եթէ աղ խառնուի հետը, արտադրուած խկութիւնը առատ կ'ըլլայ: Այլ՝ ջուրին եռացման աստիճանը կը բարձրացնէ, և խկութիւնն ալ այդ բարձրաստիճանն ստեղծելու մէջ լաւ կ'արտաբերի: Ընդհանրապէս հետեւեալ համեմատութիւնը կը գործածեն:

Թարմ վարդի թերթիկներ	25 քաշ
Ջուր	10 »
Սովորական աղ	կէս »

Ջուրը կը լեցնեն սղին հետ թորանոցի կաթնային մէջ. տափը կը զետեղեն փոքր ծակերով կառկարայ մը, որու վրայ կը լեցնեն վարդի թերթիկները, կաթարիչը կը զետեղեն և լաւ մը կ'ամրապնդեն. յետոյ՝ կրակը վառելով կ'ոկոխն թորել սովորական եղանակով, մինչև որ կաթնային մէջի խկութիւնը հասնի: Վերայիշեալ քանակութենէն կ'անուրի վեր ի վերայ 3—5 արամի չափ վարդի խկութիւն՝ եթէ բերքաւոր նպատակաւ օգտւաններու մէջ կատարուած ըլլայ. հակառակ պարագային, հապիւ թէ կէսը կ'ոտացուի: Եւ որովհետեւ այդ փոքր քանակութեամբ խկութիւնը ժողովել դժուար կ'ըլլայ, երկրորդ անգամ մը ևս թորանոցէ կ'անցունեն այդ կերպով առնուած վարդեջուրը, մէկ քանի անգամներունը իրար խառնելով և մէկէն թորելով:

Գլխաւորէի կողմերը շատեւ սովորութիւն չունին աղ խառնելու. և իւրաքանչիւր անգամահեն՝ 8—10 քաշ թարմ վարդ, 15—20 քաշ ջուրի հետ խառնելով, 2 ժամ չարուանակարար կը թորեն, ուրիշ վերջը վարդը պարպելով, երկրորդ անգամ կը լեցնեն, և այսպէս չարուանակարար: Ահա՛ ինչպէս վերը ըսինք, 4—5 անգամ անը իրար խառնելով, կրկին թորանոցէ կ'անցունեն:

Որովհետեւ վարդի խկութիւնը 16 հարիւրայրի (սանթիկրատ) աստիճանին կը սառնի, աւար համար թորանոցի օձաձեւ խառարանի բոլորտիքի ջուրը՝ միշտ սաք կը պահեն չ'փոխ խոնրակ՝ չարուանակ պաղ ջուր լեցնելու, փնջպէս կ'ընեն անքիլ թորելու ատեն:

Վարդեջուրը թորանոցէն կ'ընցնեն ուղղակի անաղապօժ պղնձեայ սափորներու (կիւսիւ) մէջ, որ երբ գործողութիւնը ձեւարտի, անմիջապէս՝ չի պաղած տակաւին, կը տանին մառաններու մէջ, կամ յարմարա-

գոյն զով տեղեր, ուր գետինը նախապէս սափորներու միծուխումը փոսեր բացուած և ջրով լիջած ըլլալով, անոնց մէջ կը զետեղեն, և կը թողուն հոն մինչև հետեւեալ օրը, որ ատեն, վարդի խկութիւնը արդէն սառած և վարդեջուրին երեսը ելած ըլլալով, կը հաւաքեն և կը լեցնեն որսակներու մէջ, զորս պէտք է պահել բեղունիքի ամբողջութեամբ և մութ տեղ մը:

Այժմ Եւրոպայի մէջ նոր գրութիւններով պատրաստուած թորանոցներու միջոցաւ, մէկ անգամայն խկութիւնը կը պատրաստեն:

Հրատարակին վրայ վարդեջուր անուրով ծախուած հեղուկները, պարզապէս թափանցէն առաջին անգամ արտաբերուած ջուրն է, զոր տակաւնեքը մէջ լեցնելով կը պահեն, առանց մէջը գտնուած խկութիւնը զտակելու: Մէկ անգամ թորուած ջուրը ուժով չըլլար. բնակի և ուժով փոխելիչ պատրաստելու համար, առաջին անգամ արտաբերուած վարդեջուրը կը լեցնեն կրկին թորանոցի կաթնային մէջ, և վրան կ'աւելցնեն նախորդ քանակութեան չափ վարդ, և կրկին կը թորեն. արտադրուածին կ'ըսեն՝ կրկնակ վարդեջուր (օտը ուս պաղաղը): Կը պատրաստեն նրա երեսի և քառեակ վարդեջուրեր (թորիւր, քատուր): Կրկնակը՝ երկրորդ և չորրորդ անգամներ նոր վարդի հետ թորանոցէն անցունելով:

Երբ բերքաւոր ժամանակ չի կրնաք անմիջապէս վարդերը թորել, և կամ եթէ ուզէք պահելով ժամանակ մը վերջը թորել. հետեւեալ եղանակը գործածեցէք:

Ուշիւ աղջուր պատրաստեցէք, աղը եւ ջուրը իրար խառնելով և եռացնելով. յետոյ լեցնեցէք տակաւի մէջ, պահուելիք վարդերը ընկղմեցէք այդ աղջուրին մէջ. գոցեցէք բերանը լաւ մը, և պահեցէք այսպէս, որ մինչև 6 ամիս՝ և աւելի կրնայ գիմանալ: Թէև խոյս կերպով պահուած վարդի թերթիկները կը սենան, քայքայ լաւ տիպն ապէկ վարդեջուր կրնան սաղ:

Վարդի խկութիւնը կը յատարաստեն նաեւ առանց թորանոցէն անցնելու, իւզերու կողմէն սղիններու մէջ թրջող զննելով կամ յագեցնելով:

Պարարային նիւթերը (իւր պարունակող) ծաղկանց արաքայրին հեղձ միանալու

գործարար յատկութիւնը ունին, ուրիշ օգտուելով՝ հին ժամանակներէ ի վեր, վարդի իսկութիւնը՝ իւրով քաղելու միջոցին կը դիմեն շատ անգամ, և այս պատճառաւ է որ, սովորութիւնն եղած է, Թուրքիոյ մէջ վարդի իսկութիւնը «վարդի իւղ» (կիւլ եալը կոչել, ինչպէս ո՛ր է մէկ քանի ուրիշ ծաղիկներունը: Այս առթիւ կը գործածեն եղանկամ ոչնչարի ճարպ, խաղի ճարպ, նափթամ-ճարպ (վազելին) և ըն:

Նախ՝ վերայիշեալ ճարպերը կը հալեցնեն կրկանօթի(*) (bain-marie) մէջ, յետոյ՝ վարդի թերթիկները մէջը լեցնելով, կը ծածկեն սրբան խնամով, կը թաղուն այգւոյն 24 ժամ. յետոյ՝ կրկին տաքցնելով, ճարպը կը հալեցնեն, պարզուած կ'անջնուեն, թերթիկները կը զատեն և նորէն ճարպը կը լեցնեն կրկանօթին մէջ և վրան կ'աւելցնեն նոր վարդի թերթիկներ: Այս գործողութիւնը կը շարունակուի մոտ 15 օր. միայն ուշադրութիւն ընկել է որ՝ կրկանօթի տաքութիւնը՝ 45—50 համարադրի (սանդղիկաւ) անոթները չտանցի:

Բայց այս գրութիւնը զլրատու անպատե-

(*) Կրկանօթը (պէն-մուրի) պարզապէս երկու ամաններէ կը կազմուի (և այս պատճառաւ մենք ալ այս անունով ուզած ենք կոչել այս գործը, թէև Գալ. Հայ բառարաններ շատ մը տարբեր անուններ տուած են, որոց շատը անյայտար նկատուած են), որոցմէ մին՝ միւսէն փոքր ըլլալով, իրարու մէջ կը դրուին, առանց մէջինը միւսին տակը նստելու, և երկուքին մէջ մնացած պարապ տեղը կը լեցնեն ջուր) և տաքցնելիք նիւթն ալ փոքր ամանին մէջ: Այս կերպով պատրաստուած կրկանօթը կը գործածեն այն առանձին, երբ անքցուելիք նիւթը՝ ջուրի եռացման տոտիճանէն վեր տաքցուեն չուզուի: Երբեմն ալ փոխանակ ջուրի՝ կը գործածեն աւազ. և այս պարագային՝ աւազը կը լեցնեն մետաղէ ամանի մը մէջ (զոր օր. երկաթէ) և մէջտեղը կը գետեղեն սանը կամ կաթնան, որու մէջ պիտի տաքցուի խնդրոյ նիւթ եղած աւարկան: Շատ անգամներ, երբ գործողութիւնը մեծ քանակութեանց վրայ կատարուի, այն տան, մեծկակ ընդունարան մը կը շինուի, և անոր մէջ կը գետեղեն սաները կամ կաթնաները՝ կարգաւ:

Հաթիւն մը ունի որ, շատ անգամ անուշած խաթիւնը ստորին առասկի կը վերածէ: Մնայիկները տաքութեան ենթարկելով, ոչ միայն իրենց իսկութիւնը ճարպային նիւթաւ կը թնդան, այլ և իրենց մէջ գտնուած կարգ մը հալող գոյեղները և իրենց գոյնը: Հետեւաբար՝ թէ այդ գոյեղներուն ներկայութիւնը, և թէ մէկ քանի անգամներ հեղուկ վիճակէն կարծր վիճակի անցնելը, այսինքն՝ մէյ մը տաքցնել, մէյ մը սառնեցնել, իսկութեան մէկ կարեւոր մասը կը բազուլածեն, ճարպը կը ծխեցնեն, որով և առնուած իսկութիւնն ալ այլալեզով կ'ստորնայ: Բայց այս անպատեհութեանց առաջը աննկել համար, Փրանսացի Մ. Բիվէռ անուն անձը պատրաստած է կրկանօթի դրութեամբ գործիք մը, որու շնորհիւ օրը 500 քիլո ճարպ կարելի է անուշահոտել: Այս գործիքը եօթը բաժանումներ ունի իր մէջ՝ սնտուկի ձևով շինուած, որու մէջ՝ հալած ճարպը ձախէն դէպի աջ երթալով, և հոն՝ վերջի բաժանումին վերի կողմը գտնուած ծառակէ մը դուրս կը հոսի ամրոյշովին՝ ծաղկանց իսկութիւնով յագեցած, առանց ուրիշ ո՛ր է գործողութեան պէտք ունենալու այլ եւս:

Մետաղատայնէ (թէլ քաֆէս) շինուած և այդ բաժանումներուն մէջ մտնալու մեծութեամբ մասնաւոր սնտուկներու մէջ կը լեցնեն ծաղիկները. և՛ մինչդեռ ճարպը ձախէն աջ կ'երթայ, այսինքն՝ Դրոլ բաժանումին դէպի առաջին բաժանումը, մետաղատայնէ սնտուկները՝ ընդհակառակը, առաջին սնտուկէն սկսելով, հետզհետէ միւսներուն մէջ կը մտնան, որոնց մէջ գտնուած ծաղիկները՝ երբ վերջին բաժանումէն դուրս կ'ելնեն, այլ ևս արտաբայի չեն արտաբանուիր իրենց մէջ՝ այս հսկանիմաց շարժումին շնորհիւ: Որովհետեւ՝ Ա. Բաժանումի մէջ գտնուած ճարպը բարդովին զաւր ըլլալով, երբ ծաղիկները արտաբանուլ մետաղատայնէ կողմը իր մէջ իջուցուի, իսկոյն անյաղարար կը ծծէ արտաբայի վերջին մնացորդները: Մինչդեռ Դրոլ բաժանումին մէջ գտնուած ճարպը՝ աջէն յագեցած ըլլալով իսկութեանէն, երբ կաղալը իր մէջ իջուցուի, ծաղիկներու իսկութեան աւելորդ և դիւրահալ մասը կը ծծէ: մնացեալ ճիշդ և մշտնապէս շարունակարար, մինչև վերջի բաժանումը:

Շար.

Գ. ԲՈՒՍՏ

ՇԵՐԱՄԱԲՈՒԾՈՒԹԻՒՆԸ

ԲԱՍԴԵՈՒԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՈՎ

Մակարուծային

փոխանցիկ հիւանդութիւններ

ՓՏԱՒՏ (Flacherie) Պայկը կամ Սիւմիկ
(հոտախորտ)

(Հարւել-Եւրոպայի Բէ- 43)

ՎԱՐԱԿՈՒՄ.—Մ. Բաթիէօն՝ կարգ մը ճշգրտող փորձեր կատարելով, հաստատած է թէ, առողջ թրթուրներ՝ իրենց երրորդ խոր-
խացումէն 3 օր վերջը վարակուած են։ Իր
այս փորձերու ճշգրտութիւնը համոզմունքով հա-
մար, իբր վկայ, առանձին բուժարանի վրայ
առողջ հոտախորտէ ծնած առողջ թրթուրներ
տածած է, որոնցմէ առած է՝ փորձի ենթար-
կուած թրթուրները։ Իր փորձերը կատարած
է հետեւեալ կերպով։ Ա.—Նախորդ տար-
ուան մէջ՝ սղակալիստ և փոստալ գոյու-
թիւն ունեցող շերտախորտներու փոշիները
առնելով, տարածած է՝ թրթուրներու տըր-
ուելիք տեղերէն։ Բ.—Երկու օր ա-
ռաջ, այդ փոշիները ջուրի մէջ խմորելով,
այդ ջուրը տարածած է վրձինով մը՝ տեղե-
ներուն վրայ։

Երկու օր վերջը, Գարաբա, վերայիշեալ
երկու տեսակ փորձերը ենթարկուած և զատ
զատ բուժարաններու վրայ տարածած թրթ-
ուրներու մէջ մահը կը տարածուի, և ա-
մէն օր փոստալէ մեռած թրթուրներ կը ժող-
վին։ Որովհետեւ՝ մանրագիտական վնասած
ատեն, երբեք մարմնիկներ չէին տեսնուեր
անոնց դիակներուն մէջ, այլ ընդհակառա-
կը մեծ քանակութեամբ թրթուրներ, մերթ-
ուանմէն, մերթ ևս համրիչաւար խմորիքներ
և յաճախ ուղ առանց թրթուրի՝ խմորիքներ
միայն։ Շատ մը կծիճներ, բայց ոչ ամենքը,
իրենց ստամոքային պարկին մէջ կը պարու-
նակէին համրիչաւար խմորիքներ։

Այդ երկու փորձերու ենթարկուած բու-
ժարաններու թրթուրները, մէկ քանի օրեր
ուշ մնացած են ցախերը երկրէ։ Առաջը
թրթուրները՝ որ իբր վկայ գտաւ տեղ տա-
ծած էին, Մայիսի 28ին արդէն ցախերը ե-

լած էին, մինչդեռ տեղերէն փոշիով ծած-
կուած բաժանումին թրթուրները հազիւ կր-
ցած են 29ին ելնել, և ջուրով օծուած տե-
րէնները ուսող թրթուրներէն ալ Յունիսի 2ին։

Այսպէս ահա, շերտախորտի նախորդ տար-
ուան փոշիները կը սրբաբանակէին իրենց մէջ,
տակաւին ողջ թրթուրներ։ անշուշտ քչա-
փակ կեղեւի մը մէջ ծածկուած, և կպզովու
պատարաստ, իրենց գարծօն դերը՝ կատարել
վերսկսելու, որովհետեւ՝ այդ փոշին ջուրին
խառնելէն 8 ժամ վերջը, արդէն կատար-
եալ վրձակի մը մէջ կը տեղադրէին, ինչպէս
և, ամենէն առաջ մեռնող թրթուրներուն
դիակներուն մէջ կը տեղադրէին ճիշդ ամենից
վերջը մեռնողներոց դիակին մէջ գտնուած-
ներուն պէս։ Եթէ ըստեղ թրթուրները չեն
մեռնիր, պատճառը այն է, որ այդ ջրի մե-
նողները իրենց կզկալներէն հետ դուրս կը
հանեն թրթուրներու սերմերը, և կամ ժա-
մանակ մը իրենց մարտդակաւ խորտակին
մէջ անողքեցիկ մնալէ յետոյ, դուրս կ'ել-
լին։

Եթէ՝ փոստալիտաւոր թրթուր մը ջուրի
մէջ լուսուի, և մանրագիտական վնասուի պի-
տի տեսնուի որ, այդ ջուրին մէջ մեծ քա-
նակութեամբ փոշուան կորիզներ կան, որոնք
կը գտնուին յաճախ՝ թրթուրներու մէջ, և
անշուշտ իրենց սերմաւարութեան մէկ եղա-
նակը կը ներկայացնէ։

Եթէ այդ ջուրը վրձինով մը տեղադրու
վրայ տարածելով, չորորդ խորխացումէն
վերջ անգամ մը միջոյն առաջ թրթուրներու
սլուի, հետեւեալ օրը՝ անմիջապէս մահը կը
տարածուի անոնց մէջ։ և մանրագիտական
վնասած ատեն ալ, թրթուրներու և խմ-
որիքներու անհուն բազմութիւն մը կը նըշ-
մարուի անոնց տեսակներուն մէջ։ Կծիճնե-
րու կէսն աւելին, իրենց մարտդակաւ խո-
րտակին մէջ համրիչաւար խմորիքներ կը պա-
րուանակեն։

Ամբարտուս։

Ա. Փոստալիտը կը փոխանցի թրթուրներուն
թէ՝ փոստալէ վարակուած թրթուրներու ա-
ղիքներու մէջէն առնուած թրթուրներով,
թէ՝ շերտախորտի փոշիներու մէջ խմորուած
տեղերէնէն յառաջ եկած թրթուրներով,
թէ՝ տեղերէնէն կամ թրթուրներու մէջ գո-
յացած համրիչաւար խմորիքներով, թէ՝ այդ

փոփոխությունները մեջ խառնելով, և սնդի ջուրը սերտեցնելու վրայ տարածելով, և թէ՛ հազարակիցութեամբ՝ երբ իրարու մօտ չի մնա:

Բ. — Վարակուածն վերջ, թրթռներու մէջ անհատապէս թիւնը խոյն կ'սկիւր. յետոյ մահը: Եւ անկէ վերջն ալ՝ փամփոփ լուր յատկորդ նշանները, թրթռակներու և խոնգիւններու առատ աճումով, և կամ միմիայն խոնգիւններ: Եւ երբ թրթռներէ ու մահը կ'ապրին և մինչև կծիւ կ'ըլլան, իրենց ստամոքային պարկին մէջ խոնգիւններ կը գտնուին, բայց ոչ թրթռակներ, որովհետեւ երբ թրթռակներէ փարակուին թրթռները, կծիւ ըլլալէ առաջ կը մեռնին ընդհանրապէս:

Գ. — Երբ թրթռները չորիւրդ խորհաճումէն վերջը վարակուին, այն ատեն մահը շատ փոփոխակաւ կ'ըլլայ: Շատ շուտ տեղի կ'ունենայ, եթէ չոր փոփոխութիւններ կատարուի վարակումը, որոնք թերեւ մեքենայական ազդեցութիւն մ'ալ կ'ունենան թրթռներու մարտադրութեան վրայ:

Երբ թրթռները լեռնաձառ են, վարակումը դանդաղորէն տեղի կ'ունենայ, և ընդհանրապէս 20 օրէն վերջ երևան կուգայ:

Դ. — Երբ վարակուած տերեւներով տրուած ճաշերը մէկ քանի խնդաններ իրարու վրայ կրկնուին, մահը աւելի շուտ և շատ տեղի կ'ունենայ:

Ե. — Զերամատան մը փոփոխութիւն մէջ դանդաճ փոփոխ յառաջ բերող տարրերը ոչ միայն մէկ ժողովին միւսը իրենց գործին յատկութիւնը կը պահեն, այլ մինչև իսկ, մէկ քանի տարիներ:

Վերոյիշեալ տեսութիւնէն հետեւեալ եզրակացութիւնը կրնանք հանել:

Վարակումը արգիւելու համար, պէտք է հետզհետէ ոչնչացնել, մահառիթ տարրեր արտաբերելու համակարգութիւն ունեցող անկողինները, և ոչ միայն բուծման ժամանակ մաքրուած ատեն ոչնչացնելու է զանոնք, այլ և՛ բուծումը լրանալէն վերջը, երբեք զանոնք թափելու չէ՛ շերտաւորման մէջ, որպէս զմնազով և չորեալով, իրենց փոփոխութիւնը չի տարածեն շերտաւորման մէջ:

Բուծումը լրանալէն վերջն ալ, ամենայն խնամով շերտաւորմանը մաքրելու և բլրի ձիւնմանով ալ հակառակելու է, որպէս զի օդին մէջ թափառող և յօրինուածային մնա-

նիկներ պարունակող փոփոխութիւններ անխնայ:

Շերամատան մէջ գտնուած բոլոր կահ կարասիները, սեղան, բուծարան, պատերը ևն. ամէնն ալ կրի ջրորուկով (քլորիւր տը շօ՞քիւրէճ գայմաղը) լուարու է, և աւելի աղէկը, լուարու ատեն՝ խնամով քերել, և խաղանակով շփելու է: Եւ այս միւսնայն գործողութիւնները վերսկսելու է յաջորդ տարին՝ բուծման սկսելէ առաջ:

Բուծման ժամանակ ալ, պէտք է թրթռներու ըստ կարելոյն շատ տեղ տալ, իրարու վրայ չի խճողուելու համար, և անմիջապէս զատել և ոչնչացնել բոլոր այն թրթռները՝ որոնք հիւսանդութեան նշաններ ցոյց կուտան:

ԱՆՏԱՎԱՐԱԿ ԱՆՀԱՏՆԵՐԷ ԱՌՈՂՋ ՀՈՒՆՏ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ. — Ժամանակակիցութեան տեսակետով, փոփոխ տրամադիր հոնաներէ, շատ անգամներ կարելի է հիւսանդութենէ վերջ մնացած բուծումներ կատարել: Այս մասին բազմաթիւ օրինակներ չեն պակար:

Այս շատ կարեւոր դիտողութիւնը, կը համապատասխանի ճիշդ պրակտիկական վարակութեան թրթռներէ՝ առողջ հոնա տանելու գլուխներ, որոնք վրայ նախապէս խոտած ենք արդէն, և միւսնայն հետեւութիւնները կը հանենք ասկէ:

Այս օրինակ բուծումներու մէջ յաջորդութիւն գտնելու համար, պէտք է շատ կանոն սկսել, և փորձերը կատարել փոքր քանակութիւններու վրայ. մանաւանդ այնպիսի տեղերանք, ուր շերտաւորութիւնով պահպանուած քիչ կը գտնուին, և հետեւորդ պատահական փոփոխութիւններ ալ կարելի չըլլար, եթէ միւսնայն ատեն մեր նախապէս յիշած նախազգուշական միջոցները ձեռք տանուին:

Չգուշանալ բուծման ժամանակ, թրթռները իրարու վրայ խճողել. բարեխառնութիւնը միշտ կանոնաւոր պահել. տրուած տերեւները ազատ խոնգիւն և տաքցած ըլլալու չեն. շերտաւորմանը միշտ օգտուել ըլլալու է, և թրթռները որչափ մեծնան, ոչնչափ բնդարձակ տեղ տալու է անոնց:

(Շար)

Զ. ԲՈՒՆՏ

ՄԵՐ ԸՆՏԱՆՆԻԿԱՆ ԲԱՐՔԵՐԷՆ

ԱՄԲԱԿՈՒՄ ԱՂԱԽՆ ԲԱՆԹԱԼՕՆԸ

[ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ]

Այդ օրէն ի վեր 6 ամիս անցած էր։ Գարեգին ամուսնացած և տանը վերի յարկը քաշուած, կնոջը հետ առանձին կ'ապրէր։ Հարսնիքէն մէկ քանի օր վերջը արդէն, նորեկ հարսը տեսնելով տանը անկարգութիւնները, նոր փափաքով մը կ'ուզէր ամէն բան կարգի կանոնի դնել, չակեղէն յարդարել։ Բայց ասդիէն կեսուրը և ալլը հակառակելով շարունակ, տոնելութեան և նախանձի սերմերը կը ցանուին. ո՛վ ամէն օր աշխատութեան տեղ կուի. և շատ անգամ գիշերաւանձ կերակուրի պատրաստութիւն ալ չէր տեսնուեր՝ միշտ մէկզմէկու թողլով։ Գարեգինի ամուսնանալէն ի վեր, Թագուկ ի զուր կ'ապասէր որ էլմաս տուտու իր մասին ըրած խոստումը կատարէ. մայր ու աղջիկ յուսախար, իրենց բարկութեան և նախանձի թոյները կը թափէին հարսին գլխուն։ Վերջապէս Գարեգին պարտաւորած էր բաժնուիլ և տռանձին տուն տեղ ըլլալ նոյն տանը վերի յարկին մէջ։ Թէեւ կադ ու կուրը չէր գողտած կրկին՝ այս կերպով ալ, և ամէն անգամ առիթ մը կը փնտռուէր տունը անկն ու վրայ ընելու. եւ ամենէն աւելի տառապողը և զրկուողը միշտ Ամբակում աղան էր։ Որչափ որ Գարեգին զատուած էր իրմէ, նա միշտ իր հայրական առաքարուի սիրով կը դուրդուրար անոր վրայ. և իրեն համար՝ միշտ 2 տարեկան փոքրիկ դուղոջուն Գարեգինն էր անկիա։ Հարսին վրայ ալ մասնաւոր համակրանք մ'ունէր, և միշտ իր կնոջմէն և աղջիկէն վեր կը դասէր զայն, թէեւ ան ալ իր դռնհիկ կողմերը ունէր։ Իրաւ է թէ քիչ շատ բարեկիրթ ընտանիքներու մէջ ալ կը պատահին եր-

բեմն ընտանեկան վէճեր, անհամաձայնութիւններ, բայց դոնէ դռնհիկ ծայրայեղութիւններու տեղի չի տրուիր։ Եթէ Ամբակում աղան զաւակները դըպրոցին մէջ փոխանակ այն կարգ մը «ութիւններու», որոնք ո՛չ միայն օգտակար չեն մինչև իրենց կեանքին վերջը, այլև վնասակար՝ և ցաւալի հետեւութեանց ալ պատճառ, եթէ, կ'ըսեմ, Ամբակում աղային տղաքներուն առջև քերականէն սկսեալ, մինչև չեմ գիտեր որ զրքերու կողքերը դոցուէին, և անոնց տեղ բարոյական ճշմարիտ դաստիարակութիւն մը տրուէր, որչափ որ ի բնէ դռնհիկ յատկութիւններ ալ ունեցած ըլլային, ճշմարիտ դաստիարակութիւնը օգնութեան պիտի հասնէր. և իրենց այդ անաղնիւ բարքերը ըստ կարելոյն պիտի բարեփոխուէին։ Ո՛վ կուրանայ թէ՛ վայրի ծառ մը՝ ընտիր յատկութիւններով օժտուած ծառի մը ճիւղին պատուաստելով, զգալի փոփոխութիւններ չի կրէր՝ խերացի և ժրաջան մշակին ձեռացը առկ։ Ինչո՞ք կը ծառայեն ուրեմն մեր դպրոցները, ինչո՞ւ անոնց դռնները բաց թողուցեր ենք, քանի որ անոնցմէ մարդկութեան անպէտ և թերակիրթ տնհատներ դուրս կ'ելլեն. հարկաւ մեր ակնարկութիւնները հազուադիւրս բացառութեանց համար չեն։ Մենք այն հաւատքը ունէինք որ, դպրոցները մէյ մէկ պատկուտելի բարոյական պատուաստարաններ են. խաբուած ենք արդեօք։

Մինչդեռ կինը ու աղջիկը իրենց կարողութենէ վեր ծախքեր կ'ընէին, Ամբակում աղա չէր կրնար երկու ծայրը մէկ բերելով ձեռք մը զգեստ դնել, և իր կարկոտանքերով զարդարուն բանթալօնը ի զուր կը ջանար մէկդի նետել. սակայն, վերջապէս այլ եւս այդ բանթալօնը անտանելի դարձած էր, պէտք էր փոխել, մանաւանդ որ՝ Ծնունդի առթիւ մտադիր էր եկեղեցի երթալ և հոս զորդուիլ. ուստի՝ ինչ բրաւ չըրաւ, ցոյրեկուան ճաշերէն զրկեց ինքզինքը, և

մէկ քանի դահեկան մէկ կողմ դնելով, յաջողեցաւ բանթալօն մը դնել Դնուհի խթման օրը:

Երեկոյեան՝ ծրարիկը թեւին տակ առած գահունակութեամբ տնէն ներս մըտաւ: Մայր ու աղջիկ արդէն բարկացած գէմքով բաղմոցին մէջ մէկ անկիւնը քաշուած նստած էին. սրովհետեւ թագուկ իր դրացուհւոյն պէս նոր կօշիկ մը չէր կրցած առնել, և ասոր համար երեզիցի չէին գացած:

Առիթ կը վնասէին որ իրենց բարկութեան կրակը խեղճ Ամբակում աղանին գլխուն թափեն: Այդ առիթը ներկայացաւ արդէն: Ամբակում աղայի առած բանթալօնը երեք մաս երկայն էր, և հազար դարձաւածներով հասկցուց կնոջը որ կարճեցնել պէտք է, ու իրիկունէ պատրաստելու էր որ առտուն կանուխ երեզիցի երթայ: Կինը իր բոլոր անկրթութիւնով մերժեց, ըսելով. «Կիրակուտը իրիկունով ես ձեռքս տակ չեմ առներ, բանթալօնդ մտածելուդ՝ աղջիկդ հազար պակասութիւն ունի. թող անոնք հագայիր որ, ասանկ խռթում իրիկունով ժամէն չի մնար, և այլման հարագ նիսպէթ ընելով չելար միս մինակ ժամ երթար»: Ամբակում աղա, վախնալով որ խռթում իրիկունով տանը մէջ կռիւ կ'ելլայ, փորձեց աղջիկը համոզել, և անոր կարճեցնել տալ բանթալօնը. բայց սն ալ արդէն՝ մօրը աղաւաղ բարքերէն վարակուած, ոչ միայն իր հայրը յարգել պատուել չէր դիտեր, այլ՝ մինչև իսկ երբ խեղճ մարդը բերանը բանար խօսէր՝ կ'անասաւէր, կը չախէր զայն՝ առանց պատկառելու անոր տարիքէն տեղամ: Ամբակում աղա ճարահատեալ՝ կ'որոշէ երթալ հարսին ողջել, յուսալով որ՝ անիկա գէթ կը հաճի այդ պղտիկ ծառայութիւնը ընել իրեն: «Քուզում հարս, աս նոր առած բանթալօնիս բաշաները երեք մասի չափ երկան են, խերուդ քիչ մը կ'արճցնէիք

որ առտուն ժամ մը երթայի»: Հարսը՝ կեսուրջը և տարւջը դէմ արդէն հակակր, մանաւանդ՝ երեկոյին երեզիցի գացած առեն անոնց ուղղած աղաւախութեան զգածուած, «Կնիկդ աղջիկդ ի՞նչ եղեր են որ ինծի կուգաս կոր, ձեռքերնին չէ կտարեր ա', ի՞նչ պէտք է նէ թող ընեն, պարապ տեղը ինծի մ'աղչեր...» ըսելով ճամբեց:

Գիշերուան ժամը 5ն էր. ամէն ոք տանը մէջ կը քնանար բացի Ամբակում աղանէն, որ մատաւանջութենէն քունը չէր տանէր. հազար տեսակ հաշիւներ կ'ընէր. երեզիցի չերթալ, խիղճը կը տանջէր զինքը: Հին բանթալօնով դուրս ելնել ամթ պիտի ըլլար տառնիկ օրով. բայց նոր բանթալօնը ի՞նչպէս հագնէր: Եւ ինքնիրեն ամբաստանով կ'ընէր. «Այս է ամուսնութեան հաճոյքը, ընտանիք կողմէն աղէկութիւնները, ա՛յս է, կի՛ն, զաւակ ունենալու յոյսերը: Կինս ինչ որ է դպրոցի երես տեսած չունի, կրթւած չէ, աստիճան մը անոր վարմունքը թող ներելի ըլլայ, բայց զաւակնե՛րս, հարսս, սրունք, դպրոց գացած են... ըսել է դպրոց ըսածնին ալ պարապ բան է եղեր»:

Ամբակում աղա իր այս մտախոհութիւններուն մէջ կ'որոշէ ելնել և ինք իր ձեռքով կարճեցնել բանթալօնը. և ցայգահանութեղը վառելով, կը չափէ, կը ձեւէ, կը կարէ և կը կարէ, պատէն կը կախէ և ալ ևս գոհ սրտով կ'երթայ պառկել: Բայց հարսը՝ զղջալով պարտաւորին խաթըրը այսպիսի չնչին բանի մը համար կտորած ըլլալուն՝ ու մաքուր կեսուրը ու տալը ակնարկելով, «պարէ որունց նիսպէթ երթամ սա մարդուն բանթալօնը կարճցնեմ» ըսելով վար կ'իջնայ, և բանթալօնը այսպէս կախուած տեսնելով, վար կ'առնէ և 3 մասի չափ կը կարէ, ներս դարձնելով կը կարէ անմիջապէս, և նորէն տեղը կախելով, գոհ սրտով կ'երթայ անկողին կը մօնայ:

Բայց երանի թէ այսչափով ընցած

ըլլար: Խեղճ Ամբակում աղա երբ անկողնին մէջ մշիկ մշիկ կը ննջէր, սաղին աղջիկը արթննալով. կը մոտձէ թէ՛ հօրը խաթրը կտորելով՝ աղէկ բան մը չըրաւ. սրովհետեւ նոր գլխարկ մը պիտի առնէր, և ասոր համար ալ հօրմէն դըրամ պիտի ուզէր անշուշտ, և այսպիսի միջադէպի մը հետեւանօք, հայրը պիտի գովառնակէր կամքը կատարելու. ուստի անկողնէն ելնելով՝ գնաց բանթալոնը կախուած տեղէն վար առաւ և... կարճաց: Աննիցա հանրմ, Կնուռդ. ըլլալուն՝ առաւօտուն շատ կանուխ ելաւ, յիշեց որ իր ամուսնոյն բանթալոնը քիչ մը կարճցնել պէտք էր. ուստի այս անգամ գէթ, իրեն անակնկալ մը պատրաստած ըլլալու նպատակով, ամէն բանէ առաջ բանթալոնը պատէն վար առաւ, 3 մատ չափերով կտրեց, կարեց և կրկին պատէն կախելով, խոհանոց իջաւ կրակ պատրաստելու:

Գիշերը առատ ձիւն տեղացեր էր, փողոցները, տանիքները սպիտակ սաւառով մը ծածկուած էին, և գիշերուան մթութիւնը կիսով չափ փարատած էր ձիւնի սպիտակափայլ շողշուղումներով. եկեղեցւոյ զանգակը կը հնչէր, և Յիսուս Քրիստոսի ծնունդը կ'աւետէր:

Ժողովուրդը խումբ խումբ եկեղեցի կը դիմէր: Ամբակում աղա ընդոտ կարթննայ և ուշ մնացած չըլլալու համար, անմիջապէս կը պատրաստուի, ու նոր լաթեր ունեցող տղու մը զգացած հաճոյքով բանթալոնը ոտքերը կը քաշէ... և ո՛վ յուսախաբութիւն, բանթալոնը մինչև սրունքները բարձրացած էր....:

ՀԵՐՄԻՆԷ

ՀԱՐՏԱՐԱՐԱԿԻՆԵՍՏԱԿԱՆ

ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԲՈՒՐԴ

ԳԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹԻՒՆ. — Բուրդը արտաքին երևոյթով երկու անջատ մասերէ կը բաղկանայ. մին՝ բուն խի «թել»ը, իսկ միւսը «քիրտ»ը (suint — քիր): Այս վերջինը՝ կենդանիին մորթին մէջ գտնուած քրտնաբեր գեղձերու արտադրութիւնն է; որ մորթային արտաշնչման ատեն մարմնէն դուրս կ'ելնէ, և բուրդի թելերն ի վար կը ծորի ճարպային նիւթի մը նման. օգին մէջ գտնուած փոշիները, ինչպէս և ուրիշ կարգ մը նիւթեր՝ անոր հետ խառնուելով, բուրդի թելերուն արտաքին մակերևոյթը բարակ խառով մը կը ծածկեն, կեղևի մը պէս, որ կը կոչուի «քիրտ»: Այս նիւթը լուարով կըլնայ անհետանալ, և իր տակը գտնուած բուն խի բուրդի թելը, կատարելապէս մաքրուելէն վերջը, երբ արտաքին օտար նիւթեր չի գտնուին ալեւ իր վրայ, քիմիական բաղադրութեամբ շատ կը մօտենայ փետուրի և եղջիւրի, և մեծ մասամբ կազմուած է «երջերիտ» (kératine) կոչուած յօրինուածային նիւթէն: Բուրդի տարրական բաղադրութիւնը իր տեսակին համեմատ քիչ շատ կը տարբերի. բայց հետեւեալ ցուցակը իր տիպար կընայ նկատուել, որ գերմանական բուրդի մը բաղադրութիւնն է:

Բնածուխ	100ին	49.25
Ջրածին	»	7.57
Թթւածին	»	23.66
Անկենդան	»	15.86
Մծումբ	»	3.66

Գումար 100.

Մծումբը՝ բուրդի բաղադրութեան մէկ էական տարրը կազմելու խնդիրը երկար ատեն բանավէճի նիւթ եղած էր գիտնականներու մէջ: Բայց այսօր՝ վերջնականապէս ընդունուած է թէ՛ ծծումբը բուրդի մէկ էական տարրը կը կազմէ. քանի որ հաստատապէս ամեն տեսակ բուրդի բաղադրութեան մէջ կը գտնուի քիչ թէ շատ քանա-

կուխեամբ, և մինչև ցարդ տնկարելի եղած է պայն բուրդէն գտնել, առանց այս վերջինը անվթար պահելու:

Բուրդի բաղադրութեան մէջ մտած այս ծծումբը՝ կարգ մը անպատեհութիւններ յառաջ կը բերէ ներկարարութեան նկատմամբ, և մասնաւորապէս՝ մէկ քանի մետաղներու հաղորդ գտնուած ատեն՝ արատաւորելու (լէքէլէնմէք) տրամադրութիւն մ'ունենալուն: Ահա այս պատճառաւ զգուշանալու է կապարէ, պղնձէ, անագէ շինուած սոխներու մէջ բուրդի ճարպերը հանելու, մաքրելու և նոյն իսկ վայն ներկելու գործողութիւնները կատարելու:

Նատրոնի կապարակ (բլումպիթ տը սուս) կոչուած նիւթը երբ ջուրի մէջ լուծենք, և ևեռացնելով բուրդը մէջը նետենք, իսկոյն կը սկսեն. մինչդեռ բամբակի և մետաքսի վրայ նոյն ազդեցութիւնը չունենար: Այս միջոցը կը գործածեն ընդհանրապէս բուրդը այդ վերջի հիւստածանիւթերէն որոշելու համար:

Երբ բուրդի մանածները կամ անկուածները բաց գոյնով ներկել ուզուի, պէտք է անպատճառ իր բաղադրութեան մէջ գտնուած ծծումբի մէկ մասը հանել, որով համար կը գործածեն ընդհանրապէս հետեւեալ միջոցը: Ու և է ալքալիի թեթեւ լուծուածքին մէջ՝ զոր օրինակ թեթեւ կրաջուրի (քիւլէճ սույի) մէջ կը թաթխեն բուրդը, յետոյ կը հանեն և պարզ ջուրով լուսլէ վերջը՝ քիչ մը ջրաքորրական թթուաւ (ասիտ քլորիտիք և կամ ասիտ միւռիաթիք = թուզուհու) պարունակող ջուրի մէջ կը թաղուն. կը հանեն՝ և կրկին ջուրով կը լուսն: Այս գործողութիւնը պէտք է կրկնել այնչափ անգամ՝ որչափ տրուելիք երանգը (գոյն) բաց և թեթեւ ըլլալ կ'ուզուի:

Վերոյիշեալ գործողութիւններէն վերջն ալ բուրդը թէև ծծումբ կը պարունակէ տակաւին, բայց տարբեր ձևի մը տակ, այսինքն՝ չեզոքացած, որովհետեւ՝ նատրոնի կապարակը այլևս ազդեցութիւն չունենար իր վրայ:

ԲՈՒՐԴԻ ՎՐԱՅ՝ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԱԶԴԱԿՆԵՐՈՒ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ. — ՏԱԲՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ. — Երբ բուրդը 130 հարիւրարդի (սանթիկուստ) ամսիճան տաքցնենք, կ'սկսի բաղալուծուիլ, և արտաքինը անուշատր (ամօնիաք=նիշատըր բուհու). իսկ 140

էն 150 հարիւրարդի ամսիճան տաքութեան մէջ ծծումբախառն շոգիներ կ'արտաքնդէ:

Երբ բուրդի թելը ճրագի մը բոցին մօտեցնենք, դժուարութեամբ կը վառի, այրած փետուրի անախորժ հոտ մը կը բուրէ, և իր ծայրը կը կազմուի ծակոտէն բնածղխի գնտիկ մը:

Բոլոր այս յատկութիւնները կը ծառայեն՝ բուրդը միւս բուսային հիւստածանիւթերէն որոշելու: Անուշատրախառն պղնձի ջրոքսիտի (խուսաթ ա'օքսիտ տը գիւլիվալ ամօնիաքալ) պալ լուծուածք մը բուրդին վրայ ազդեցութիւն չունի. բայց երբ տաք ըլլայ այդ լուծուածքը, այն ատեն բուրդը կը հալի:

Վերոյիշեալ լուծուածքը մաղելու Վրայ նուազ կը ներգործէ, և չի կրնար հալչնել:

ԹԹԻՈՒՏՆԵՐՈՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ. — Ջրու քլորական թթուաւ և ծծումբական թթուաւ թեթեւ լուծուածքները, տաք թէ՛ սալ, իսկ քիչ ազդեցութիւն կ'ունենան բուրդի վրայ. միայն թէ կեղեկներու բերանները ձագարի ձևով դէպի գուրտ կը բռնան, որով և բուրդը շոշափման սպէն աւելի կաշտ ապուլութիւն մը կը թշուա մատնելու վրայ: Պէտք է յիշատակել սակայն որ, բուրդը տառտորէն թթուաւ կը ծծէ՝ երբ իր ազդեցութեան տակ գտնուի. և այդ ծծած թթուաւը իսկաւ մեծ գժուարութեամբ գուրտ կ'ելլայ, որչափ ալ լուսնուի, և մինչև իսկ եռացեալ ջուրի մէջ:

Հոնք նաև որ, թթուաւտիտուն ջուրի մէջ (ինչպէս վերը ըսինք) մինչև եռացման ամսիճան բուրդը տաքցնելով և յեղաց ալ պարզ ջուրի մէջ, հանքածուխի խոցածանէն տծանցուած թթուաւտիտով ներկելը դիւրութեամբ կ'ստանայ՝ առանց ուրիշ թթուաւ մը աւելցնելու. այդ ներկին, ինչպէս կ'ընեն սովորաբար:

Երբ բուրդը խտացեալ թթուաւներու ազդեցութեան տակ դուրս, իսկոյն թեղերը կը խաթարին. բայց աւելուած այնչափ ուժգին չըլլար, որչափ բամպակի վրայ: Ստացեալ թթուաւներու բուրդի վրայ ունեցած այս ազդեցութեան օգտուելով, քուրջերու մէջն բամպակը կը գտնեն, երբ այս վերջինները ոստայնուած են բուրդի և բամպակի թեղերով խառն: Ջրախառն ծծումբական թթուաւ մէջ կ'ընկղմեն քուրջերը, և գուրտ հանելով, աւելորդ հեղուկը կը քամեն նա-

խառնույն, և վեր ի վերայ 110 հարկերարդի աստիճան ասքուսթիւն ունեցող ջերայի կամ փուռի մը մէջ կը չորցնեն: Բամպակը բաղալու ծուած ըլլալով, փոշիացած կը թափի. մինչդեռ բւերը՝ բաղդատարար քիչ վնասուած կ'ըլլայ: Ուրիշ միջոց մ'ալ կը գործածեն բուրդը բամպակէն պատելու համար. մէկ քանի ժամեր չարունակ, քուրջերը կապոյն տաք ջրաքլորական թթւութեամբ ազդեցութեան կ'ենթարկեն:

Երբ բուրդը՝ խառնեալ ջրաքլորական թթւութեամբ մէջ տաքցնենք, գրեթէ ամբողջութեամբ կը հալի. և այդ լուծուածքին մէջ յառաջ կուգայ այն ատեն թրջածնակոն թթւութեամբ (acide lauginique) կոչուած նիւթը, որ խիստ կարեւոր դեր մը կը կատարէ կարգ մը ներկարարութեանց մէջ, ինչպէս պիտի տեսնենք իր կարգին:

Անկենդանական թթւութեամբ (անիտ ապոթիք—քէմիս) նոյն, վերը յիշուածներուն պէս կը ներգործէ բուրդին վրայ, սա տարբերութեամբ որ դեղին գոյն մը կուտայ անոր, որ հետեւեալն է՝ ներգործութեան ատեն յառաջ եկած՝ դեղնաստայական թթւութեամբ (acide xanthoprotéique). Որովհետեւ անկենդանական թթւութեամբ ազդեցութեան տակ բուրդը թեթեւ կերպով կը դեղնի, և միևնոյն ատեն եթէ ուրիշ գոյններ ալ ունի կ'եղծանէ, այսինքն՝ կը գունաթափէ. իր այս յատկութիւնը օգտակարապէս կը գործածեն արդէն ներկուած բուրդ մը երբ գունաթափելու ուզեն, Կրկին ասորեք գոյնով ներկելու համար. զոր օրինակ, հանդերձեղէն ներկողները այս միջոցը կը կիրարկեն, ինչպէս և ներկանոցներու մէջ երբ օխալուծման մեղի ունեննայ: Այս առթիւ, անկենդանական թթւութեամբ ջուրի մէջ տարածելով կը տաքցնեն, և գունաթափելիք բոլորէնը այն ատեն միայն լուծուածքին մէջ կ'ընկղմեն, երբ եռալ սկսի: Լուծուածքին մէջ կը պարունակ 3—4 մայրկեան միայն, որ կը բաւէ գոնեաթափելու համար, երբ գործողութիւնը աւելի երկար տեւէ, այն ատեն բուրդի թեւեղը խաթարիլ կ'սկսին: Լուծուածքին խտութեան աստիճանն ալ հաշուարար ըլլալու է 1.02ի, այսինքն՝ 100 օխալ ջուրին մէջ պէտք է լեցնել մօտաւորապէս 5 օխալ անկենդանական թթւութեամբ:

Շար.

Վ. ԲՈՒՈՏ

ՆԱՄԱԿՆԵՐ ԵՒ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

ԱՌ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՐՑՈՒՄ ԹԻՒ 68

Ազնիւ բարեկամս, Բոլատ էՖ.

Զարմացա՛ք, այնպէս չէ՞, և կրաւունք ունենալ կը կարծէք: Զարմացա՛ք թէ ինչու բարեկամ կոչեցի զՁեզ, առանց անձնապէս ճանչնալու:

Սակայն չէ՛ խնդրեմ ըսէք, կրաւունք չունի՞մ բարեկամ ըսել Ձեզի, քանի որ Հանրագիտակից առաջին թիւէն մինչև այսօր չարունակարար կը կարգում զՁեզ, քանի որ հոն միշտ կը տեսնեմ զՁեզ կըրե թղթէ հայելիի մը մէջ: Հանրագիտակից ինծի բողբկա՛մ է, կամ ես զինքն այնպէս կը ճանչնամ, որ և անոր շարժիչ լծակը չէ՛ք թիթէ: Դուք չէ՛ք Հանրագիտակից. ապա ուրեմն թոյլ տը՛ւէք որ կոչեմ զՁեզ իմ բարեկամս:

Հասարակական հրապարակման վրայ փոխանակ եթէ ռային վիճակները չափեւու չափելու լու սին անայնպիսիութիւններով փոր չի կշտացնող ճառարանութիւններով, և փոխանակ այլախեղութիւններով ճախարարութեան տեսնելու անհրա՛ւէ «նհ»երու, անի «ահ»երու թիթու «աւաղ»ներու անծայր տահմանները՝ այս՛, բարեկամ, փոխանակ ատենք ընելու, չիփխափ ժողովուրդին դիմել, սարգիլ տնար մութ իստերուն մէջ խօսի, և ճամբաներ յիցց տալ, սրհետաները ծագեցնելու ախտով, հեւ ի հեւ վաղել տա քաղաքակիրթ ըստ ղուած ազգերուն ետեւն ու անոնց հասնիլ. գիտութիւնը ռամկայնել, ժողովրդականացնել, նահապետական երկրագործութիւննիս յեղաշրջել, և իսկախօրէն կուսիլ ընդդէմ նախապաշար մտքերու և այս չէ՛ք բարեկամ, Ձեր խախալը: Ես մինչև հիմա այս նշանաբան եմ Ձեր թերթին մէջ, ու միշտ համակրած, միշտ սիրած, միշտ լափած անոր էջերը (*), հոն շօշափած եմ զՁեզ, խանդաւ ու ուրիշ հոտ հոգի մը, զեզուն ու բեզուն ուղղել մը, սիրտ ու զգայնաւ սիրտ մը: Այսպէս եմ

(*) Կարծեմ ասի ճաշակի խնդիր է. նոյնպէս ճաշակի խնդիր մը՝ լաւ չըլլա՛ր որ Ազգ. և Ներքին լուրերուն տեղ Արաքսը երեկ:

ճանչցած զՁեզ, իմ փափաքներովս, մասամբ իմ գաղտնիարներովս, համար իմ զգայունմե-
րովս: Հետևաբար, ընդունեցէ՛ք իմ սրտագին
շնորհաւարութիւններս՝ որոնցմով կը մաղթեմ
թերթիդ երկարատե կեանք ու փայլուն և
պանծալի յաջողութիւն, օգտարեւ ծաւա-
լում ժողովրդի խաւերի մէջ:

Համակրելի բարեկամ, Ձեզ նկատմամբ
սէրս ու համակրութիւնս երթալով կ'աճի
նա՛ մանաւանդ նորօրինակ գաղափարներուդ
համար, զոր ունեցեր էք վայելչապարգե-
թեան բաժին մը նուիրելով հայ աղքատիկ
ժողովրդեան, մասնաւորապէս զեղապաշա-
խախտ սեռի զարգացման, թէև ինձ ոչ
պէտքըցու, սակայն ազգական օրիորդի մը
նուիրելու և աւելի՛ զՁեզ իմաստն քաջա-
շնորհալ սէրէս պարտաւորեալ՝ կը խնդրեմ որ
զիս ալ բաժանորդ գրէք նոյն վայելչապար-
գութեան բաժնին:

Առիթ էն օգուտ մը քաղեմք օրերի բո-
լատ էֆ. չըլլա՞ր որ Հանրադիտակիդ հարցում
մըն ալ ես ընեմ, քանի մը ազգական ու բո-
րեկամ պարտիզպաններու խնդրանայ վրայ —
«Ազգայն»-ը, կ'ըսենք ա՛յ ինչ խղճալի է և ող-
բալի մեզ համար տեսնել պարտէզներու
թիթենիներ՝ չորցած, փառայած, զոհ եղած
մանրէներու արշաւանքին: Գարնան՝ մինչդեռ
իրենց բնկերակիցները կը գորդորուին կա-
նաչապարդ զգեստներով, այս խեղճուաւ-
տանները զգեստներն կը ձգեն անվարտի տը-
ղու մը պէս, կը դեղնին, կուլան, կը չորնան
ու «ի հուր անկանին»: Ծանր՝մ, կ'ըսեն յու-
սահատ պարտիզպաններ, ա՛յ ինչ խայտո-
ռակութիւն պիտի ըլլայ, ամէն տարի 30—
40—60 թիթենիներ զոհ կ'երթան աւերիչ
քանդիչ մոնրէներու՝ որ պարտէզէ պարտէզ
կարգու կ'որջաւեն և սոսկալի տեւր կը սըփ-
քեն: Դուք ալ Բծլաս էֆ. խնդրեմ, գոհա-
ցում մը տուէք մօտեց, որովհետեւ գլուխս կը
տանին կոր, թերթիդ շատ մօտիկ թիւերէն
մէկուն մէջ թիթենիներու այս «զուրուտան»
ըսուած հիւանդութեամբը զրոգեցէք, եթէ
ընելիք դարմաններ կան՝ փութով յայտնե-
ցէք, որպէս զի այդ սարսափելի հիւանդու-
թեան առաջին առնեն: ասով շատ մեծ պի-
տի ըլլայ արդէն Ձեր կատարած ծառայու-
թիւնը աղքատ անուռ երկրագործ դասուն,
որ հակառակ պարագային, այսինքն եթէ
մէկը իրենց օգնութեան չի հասնի, պատրաստ

են ամբողջ թիթուտանները կրակի տալ, գոնէ
այդ կերպով ոչնչացնելու համար այդ անե-
րես մանրէները, և վերջ տալու իրենց շա-
հատակութեանց:

Ձեզ համակր

Ատարազար

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԱԹՏԱՐԵԱՆ

Այցելու Ուսուցիչ Ա. Կրպ. և Լ. Կ. Կ. Մեջլ. Թաղ.

ՅԱՆՕԹ. ԽՄԲ. — Վերոյիշեալ հարցումը
մեզ ուղղուած է այս օրերս նաև մէկ քանի
տեղերէ, և մասնաւորապէս Կէյքի կողմէն
բացի մէկ քանի անձերէ, Ֆիլիք էֆ. անուն
Հայ-Օրթոտոքս անձի մը կողմէ, որ կը խոս-
տանայ ամէն գիւղերէ հարկաւոր ոսկիներ
հաւաքելով, իբր վարձք զրկել մեզ, եթէ կա-
րողանանք միջոց մը ցոյց տալ իրենց: Բայց
գեթաղգարար միմայն հիւանդութեան անու-
նը տուած են մեզ, աւանց անոր ախտանի-
շներու վրայ կարեւոր տեղեկութիւններ տա-
լու. որովհետեւ հիւանդութիւնը այդ անու-
նով միայն այդ տեղացիներուն ծանօթ եւ
հասկնալի է, պէտք է անպատճառ մեր ու-
զած տեղեկութիւնները հաղորդեն մեզ, եւ
զայս կը յանձնարարենք մասնաւորապէս մեր
ներկայ Պատ. Յողուածագրին, որ այնչափ
լաւ գիտէ իր գրիչը վաշտեցնել. անչուշտ՝ ե-
թէ ինք չերամբարեւութեան և թիթենիի մի-
շակութեան վրայ գաղափար չունի, կրնայ
Ատարազարի մէջ գտնուող վկայեալ շեքամ-
բոյժերու գիմելով, անոնց կարծիքն առնել,
և ըստ այնմ մեզ հաղորդել: Եթէ երբեք նոր
հիւանդութիւն մ'է, հարկ է անպատճառ
անձնապէս քննութիւն կատարել տեղւոյն վը-
րայ: Թիթենիներու մշակութեան վրայ մօտա-
ւորապէս պիտի սկսինք գրել. այն ատեն հի-
ւանդութեանց վրայ ալ պիտի խօսինք ար-
դէն, և իրենց դարմանն ալ պիտի ցուցնենք
ըստ կարելոյն: Բայց այժմէն օգտակար կը
դատենք սա չափն ըսել թէ, ամէն մշակ-
ուած ծառ, որ ամէն տարի կանտաւորա-
պէս կը յօտուի (սլուտամաք), առ ա-
ռաւելն 15—20 տարի կ'ապրի և յանկարծ
օրին մէկն ալ կը չորնայ՝ առանց նախորդ
տարին հիւանդութեան ու է նշան ցոյց տը-
ւած ըլլալու: Պատասխանեցէք առաջին առ-
թիւ ուրեմն, Դուք ալ մեր հետագայ հար-
ցումներուն:

Հովիտները, դաշտերը, բլուրներու կողերը և ոտքերը, ինչպէս և սարաւանդները տնկուած թփերն ենք առ հասարակ Զեր այդ «գութութեան» կոչած հիւանդութեան զոհ կ'երթան.— Նոյնպէս՝ խոնաւ կամ չոր տեղաւանք, ֆերքնահողը խոր և կախուղ, կամ սպառաժուտ, կաւուտ, կրային, աւազային հողերու մէջ միւսնոյն կերպով տեղի կ'ունենայ.— Գեղարայս թփերն ենք ալ այդ հիւանդութեան զոհ կ'երթան, ապա թէ ոչ միայն տարէցները.— Հիւանդութիւնը ինչպէս կ'ըսուի. երբ, ծառին ո՞ր մասէն, և ինչպէս կը վերջանայ:

Եւ մենք պիտի ցուցնենք, թփերն ենք մշակութեան վրայ դրած առնետի միջոց մը, որով թէ շատ մը ծախքերէ պիտի ազատին Զեր շերամարոյծները, և թէ Զեզ ահարեկող այդ հիւանդութենէն ալ դերծ պիտի մնան անոնք:

ՀԱՐՅՈՒՄ ԹԻԻ 69

Պատ. Խմբագիր Տէր,

Ներկայիւ կը փափագինք որ, Պատ. Խմբագրութիւնդ թփերի մշակութեան մասին պէտք եղած տեղեկութիւնները տայ մեզ. կը յուսանք թէ կը բարեհաճիք ի մօտոյ հանրագումար Հանրագիտակ շարաթափերթիդ միջոցաւ մեր այս փափաքին գոհացում տալ, ի նկատի առնելով տեղւոյն օդը, դիրքը և հողը՝ ըստ հետազոյ հարցարանին:

1.— Ի՞նչ տեսակ հող ունենալու է և զայն ի՞նչպէս պատրաստելու է:

2.— Ո՞ր առնետ պատրաստելու է հողը թփերին անկելու համար:

3.— Ո՞ր ամուռն մէջ տնկել, ո՞րչափ խոր և ի՞նչորմէ հեռաւորութեամբ:

4.— Ոմանք տունկին թէ՛ սարմատէն և թէ՛ միւս ծայրերէն կտրելէ վերջ կը տնկեն. ի՞նչ է ձեր կարծիքը այս մասին. դուք ո՞րչափ կը յանձնարարէք և ինչո՞ւ:

5.— Նախ թէ հարկ է պատուաստել, և երկրորդ՝ եթէ հարկ է, տնկուելէն ո՞րչափ տուն վերջ պատուաստել, և առ այս դիւրին և յաջող կերպը ո՞րն է:

6.— Ոմանք ծառին բարձրացման համար կը կտրեն զայն. կը փափագինք գիտնալ թէ երբ և ի՞նչ համեմատութեամբ կտրելու է և ի՞նչ են վերածման դիւրին և արագ միջոցները:

7.— Գիտէք թէ մեր տեղը դաշտային է. հետաքրքիր ենք իմանալ թէ՛ փորելու (որեւէ զգեստին) համար ի՞նչ տեսակ գործիք, երբ (տարւոյն ո՞ր ամսուն կամ եղանակին) և թէ երբ օդը անձրեւոտ է կամ երաշտութիւն կը տիրէ, ի՞նչ կը թելագրէք մեզ ընել այդպիսի պարագայից ներքեւ:

8.— Թէ՛ տունկը տնկուած առնետ և թէ՛ վերջը, երբ, ի՞նչ տեսակ, ո՞ր եղանակին մէջ (կամ ամսուն) և քանի՞ անգամ աղբ դնելու է:

Մնամ միշտ

Կ. ՓԱՓԱՋԱՆ

Ատարազար

Յ. Գ.— Կը հաճի՞ք բացատրել մեզ նաև թփերին չորնալուն պատճառներն և անոնց դարմանը:

ԾԱՆՈԹ. ԽՈՐԲ.— Պիտի ջանանք մօտաւորապէս Զեր փափաքանաց գոհացում տալ. թէ և այսօր իսկ կը փափաքէինք պատասխանել. բայց որովհետեւ թերթիս մատակարարութեան և խմբագրութեան հոգը միանգամայն մեր վրայ ծանրացած է, կարելի չէ դժբաղդարար փութով ձեռնարկել, քանի որ մանրամասն և ընդարձակ տեղեկութիւններ տալ մեզ սկզբունք ընտրած չէ:

Եթէ ժողովուրդը քիչ մ'առնի քաջալերել ուզեր զմեզ, մենք ալ շատ կանուխէն թերթիս նիւթականը բարւոքած ըլլալով, մէկ երկու գործակիցներ պիտի առնենայինք այժմ, և մենք՝ միմիայն խմբագրական հոգը վրանիս առնելով, բոլոր հարցումներուն ժամկետակին պիտի կրնայինք պատասխանել՝ ամենայն յօժարութեամբ. մանաւանդ որ՝ թերթիս ծաւալն ալ ընդարձակելու նպատակ ունենալով, ամէն կարգի հարցումներու ալ միշտ տեղ չպիտի պակսէր: Առ այժմ պէտք է սպասէք, ինչպէս մենք ակնդէտ կ'սպասենք ժողովուրդի քաջալերիչ աջակցութեանց:

ՀԱՐՅՈՒՄ ԹԻԻ 70

Մեծապատիւ Բաշաթ Էֆէնտի

Տուներ աշխատող խտրար մեմ. ձեր Հանրագիտակ շատ կը սիրեմ ու կը կարգամ. Առուած ձեր գործին հաջողութիւն տայ. լաւ գրել չեմ գիտնար. բայց էր աղէկ կը կարգամ. ձեր գրած կերակուրներ կը սովորիմ ու

կերեւմ. բայց Ասծոյ սիրուն ամէն ատեն գրեցէք ալափրանկա կերակուրներ և աւուշեղեններ, պօրեկներ. մէկ մալ տեսնելով որ ամենք ձեզ հարցումնք կանեն, մէկ ալ ես պիտի անեմ էֆէնտի. մալեգնէզ ինչպէս չինելու է որ լաւ լինի. ալափրանկա սալցաներ ինչպէս կը շինեն. շնորհակալ ենք էֆէնտի. գիշերս լաւ չէ բայց ձեր գրածներ կը հասկնամ անհոգ եղիք. և ինչ որ չի հասկնամ, մեր տան հանձններու կը հարցնեմ. ողջ մնաք մեծապատիւ էֆէնտի:

Խոսարար Մինաս

ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԽՆԴԻՐ ԻԶ.

Ներկի Հասարակածի տարածագիծը 12754 քիլոմէթր է, սակայն արեւն իմանալի հորիզոնին վրայ գտնուած ատեն՝ անոր կեդրոնէն Ներկի շառաւիղին մեծութիւնը 8", 91 անկիւնով մը կ'երևի. արդ' ո՞րքան քիլոմէթր է Ներկի կեդրոնին հեռավորութիւնը Արեւու կեդրոնէն, գիտնալով որ փորձով տարացուցուած է թէ՛ որեւէ մարմին կամ առարկայ երբ գտնէն իր բարձրութեան 57 անգամը հեռուէն գիտուի, աստիճանի մը անկիւնով կը տեսնուի:

Նիկոմիդիոս

Ա. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ԼՈՒԽՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒ

ԻՖ. Խնդիրն՝ որով 11-ն մինչև 12 թուոց քառակուսիներուն գումարը կը հարցուէր, լուծեր են՝ Պրք. Ներսիսեան, աշակերտ Վիկենտիան վարժարանին ի Բոսնիայի:—Գ. Մ. Էօրմէզեան Ագ-Շէհիր:

ԻՖ. Խնդիրն՝ որով 12 կարգ եռանկեանց գումարը կը պահանջուէր, լուծեր են՝ Պրք. Ներսիսեան Մ. Տէօյիւնճեան. — Գ. Մ. Էօրմէզեան. — Սիրաք, Կրազիր ի Պօլիս:

Գ. Մ. Էօրմէզեան էֆ. եւ գրագիր Սիրաք լուծած են նաեւ ԻԱ. Խնդիրը, որ ձեռքերնիս հասած ատեն, արդէն նախորդ թերթը մամուլին յանձնած էինք:

ԳԱՂԻՐԷՑԻՆԵՐՈՒՆ

Գաւաթ մը տաք թէյ, ուրիշ ու է ըմպելիքէ աւելի մարդու ծախուր կ'անցնէ և կը զովացնէ. ուստի՝ երբ չափազանց ծարաւած ըլլաք, փորձեցէք զայն անցնել տաք տաք

գաւաթ մը թէյ խմելով: Անգղիացիք քաջ գիտնալով թէյի այս օգտակար յատկութիւնը՝ Գահիրէի պէս տաք երկիրներ գտնուած տեսնելին, ուրիշ ու է ըմպելի չեն գործածեր զովանալու համար: Արդէն՝ Ծայրագոյն-Արեւելքիները տաք եղանակներու մէջ զովանալու համար տաք ջուրի լողանքնէր կ'ընեն. և թէյատուենեալու մէջ ալ, ամեն յաճախորդի քով ամանով մը ջուր և անձեռոց մը կը դրուի, զոր ջուրին մէջ թափխելով, յըրբուր, զովանալու համար:

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԷՖ. այս անգամ Գահիրէի մէջ թէյի վաճառանոց մը հաստատած ըլլալով, հազաւ Արգոյ հատարեկութեան յայտարարել թէ, ամեն միջոց ձեռք առած է իւր Պատ. յաճախորդները գոհացնելու համար:

Գ. Իսագուլեան էֆ. ի վաճառատան մէջ կը գտնուին, Պոլսոյ հանրածանօթ Կ. Եւովրուեան և Յ. Իսագուլեան էֆ. ներու վաճառատան ամեն տեսակ ընտրելագոյն թէյերը, և կը ծախուին միւսնոյն գներով:

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Ի գիմաց ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ կ'առարարէ մի միայն Տնօրէն-Խմբագրապետ Ղ. ԲՈՂԱՏ, որու գիմել պէտք է, առանց բացառութեան, թերթիս վերաբերեալ ամէն գործառնութեանց համար:

در علیّه ده بفتحه قوسنده اسکی ضبطیه ده

۱۹ نومرو لی دکانه «مجموعه علوم» غزنه سی

سر محرری (بولاد) افدی به

Ղ. Բոլաս Տնօրէն-Խմբագրապետ

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ»

19. Էսկի-Չապթիյէ, Պաղչէ-Գափու

Ս/Թամպօլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK,"

19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Stamboul

ԱՐՏՈՂԱՏԻՐ Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ

աբողն յղէ առ Տեսչութիւն վեհապետի Մխիթարեան Տպագրատան. ապահովագրեալ նամը չառ եթէ կ'ուզէ ընդունիլ թերթերը:

Թերթերն կը ղրկուին հինգ հինգ իւրաքանչիւր ամիս մի Ռուսաստանի և համեմատողի համար յայտնի է թէ լաւագոյն է յանձնարարականաւ (recom mandé) ղրկել. առ այս փափաքողն պէտք է 25 սան տիմ աւելի հաշուէ, որով բաժանորդագրոյն վրայ աւելցնէ ֆր. 2,50— (12,50 ֆր. — 5 րբլ. — 4 ու կէս տոյար). վասն զի կորստեան պատասխանատու չէ Տեսչութիւնը:

Տպագրութիւնը աւարտելէ վերջ, բառգրքին գինն պիտի բարձրանայ 15 ֆրանքի. բաց ի թղթատարի ծախուց:

* Վերագրեալ ազդի վրայ՝ Հանրագիտակի բոլոր Գործակալներու և Բաժանորդներու ուշադրութիւնը կը հրաւիրենք, և կը յանձնարարենք վեր. Հ. Ս. Երամետնի սոյն հմտայիր և արգիւնաշատ գործը, որ ոչ միայն ֆրանսագէտ հայերու, այլև մինչեւ իսկ ֆուսթերէն չգիտցող ամէն Հայ գրագէտի, բանասէրի և ընթերցատէրի համար կարեւոր է, և անոնց չափ և ունի կրնան օգտուիլ այդ բառարանի ուղղութիւնէն. քանի որ ամէն բառի առջև պիտի գտնան ընդարձակ քոցատրութիւններ, լուսարտնուած խնամտեալ պատկերներով:

Եր. Խ.



ԹԵՅԸ

ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ԸՆՏԻՐ ԵՂԱՆԱԿ ՄԸ

Զինատանցիք թէյը կը պատրաստեն նոյն ինքն խմուած գաւաթին մէջ, հետեւեալ կերպով, զոր կը յանձնարարենք մեր ընթերցողաց իր գիւրութեան և օգտակարութեան համար:

Գաւաթին մէջ կը դնեն նախապէս պտղունց մը թէյ, եռացած ջուրը վրան կը լեցնեն, և իսկոյն՝ գաւաթին տակի պնակը վրան կը ծածկեն. անշուշտ չաքարը դնելէ յետոյ. թէև Զինացիք թէյը առանց չաքարի կը գործածեն, թէյի քիւղութեամբ պատրաստուած կըլլայ,

երբ տերեւները գաւաթին յատակը իջնան: Զի մոռնանք ըսելու թէ՛ Զինացիք եր այս կերպով կը պատրաստեն իրենց թէյը, առանց պնակը գաւաթին վրայէն վերցնելու, մէկ եղերքէն կը խմեն, որպէս զի հոսը մէջը մնայ:

Կ. Խալիլուեան և Յ. Իսաղուլեան Տեարց վաճառատան մէջ ծախուած թէյերը Արգոյ հոտարակութեան մասնաւոր ուշադրութեան կը յանձնենք, որոնք հրապարակը գտնուածներուն մէջ, իրենց տեսակի ազնուութեամբ և գիներու թափանցութեամբ անմրցելի եղած են: Կեղծերէն զգուշանալու համար, գիմեցէք ուղղակի Ընկերութեան Կեդրոնատեղին, Կ. Պոլիս, Ճեղալ-Պէյ խանի տակ, 40 թիւ

ՏՐԴ. Բ. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՄԱՆԿԱԲԱՐՁ-ԿԵՆՏՐԱՆՏԱԲՈՅԺ, ՄԱՍՆԱԳԵՏ

ՋՂԱՅԻՆ ՀԻԻԱՆԴՈՒԹԵԱՆՑ

Որ իր երկար փորձառութեամբ ծանօթ է, մի քանի տարիէ ի վեր ուսումնասիրութիւններ կատարելէ ղկնի ի Բարիզ, դարձած է մայրաքաղաքս, հաստատելով իր բնակութիւնը Բերա Մէքթէպ-Պայրամ-Փողոց, թիւ 29, ուր ամէն օր կէս օրէ վերջ հիւանդ կ'ընդունի: Մասնաւորապէս կ'դարմանէ կնոջական և ջղային ամէն հիւանդութիւններ: ԵՇ. նոյն ժամուն ձրի կը դարմանէ կարօտեալները: Ելեքտրաբուժում ամէն տեսակներով, մասնաւոր քննութիւն Ռէնօթկէնեան մեքենայով:

ՀԱՌԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ ՀԱՅՐԱԳԻՏԱԿԻ
Վ.ԱՅԵԼՁԱԶԱՐԴՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԻՆ

Դ. ԲՈԼԱՏ

Խմբագրապէս Հանրագիտակ Հանդէսի

Թիւ 19 Էսկի-Ձապթիյէ

Կ. Պոլիս

Տէր.

Գնահատելով Ձեր հանրօգուտ ձեռնարկը, հաճեցէք զիս բաժանորդ արձանագրել թերթիդ վայելչագարդութեան բաժնին

Ստորագրութիւն
(Ընթեռնի)

1898

Բնակութեան տեղ
Հասցէ

ՄԵԾ ՄԹԵՐԱ ՈՅ ԴԵՂՈՐԵԻՑ

Լ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԷ

Կ. ՊՈԼԻՍ, ՖԵՏԻԼԵԱՆ, ԽԱՆԻ ՏԱԿ ԹԻԻ

Սոյն վաճառատուն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝ ամեն տեսակ թարմ գեղորայք. վիրաբուժական գործիքներ. Անգղիական և Գաղղ. պատրաստ գեղեր, գօնեակներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ միջեր մը, յարմար գներով: Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններ ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացրելու համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք զաւառաց համար, որոնց

կը զրկեն գեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:

Շատեր այնպէս կը հաւատան թէ Պոլսոյ հրապարակին վրայ ճՇՄԱՐԻՏ և ԱՆԽԱՐԴԱԽ Մօռիւ ձկան իւղ չի գրտնըւիր. այս կարծիքը շատ սխալ է. պէտք ունեցողները թող գիմեն Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Տեարց Դեղորէից վաճառատունը, Փրնտգլեան Խանի տակ թիւ 3, ուր պիտի գտնեն ուղղակի նորմէկիայէն բերել տրուած ամենալաւի ձկան իւղի տեսակներ: Մեծաքանակ եւ փոքրաքանակ վաճառումներ կ'ըլլան խիստ գիւրամատչելի գներով:



ԳՈՐԾԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ



Ասա-բագար — Ստեփան էֆ. Սափորյան էֆ.
Արաբկիւր — Գ. Տէվէճեան էֆ.
Էրգում — Եդ. էֆ. Տ. Աղարեան
Թեհրան — Կարապետ էֆ. Բաբարեան
Իզմիր — Կարապետ էֆ. Մալէճեանեան
Իզմիս — Աբրահամ էֆ. Կ. Կոստանեան
Մալկարա — Վ. Մանուկ էֆ. Չօլաքեան
Խարբերդ — Խոսրով էֆ. Քէլիչեան
Թրեպոլի — Գալուստ էֆ. Գըլըճեան
Սինոպ — Յ. էֆ. Պետրոսեան

Արմենակ էֆ. Սօմունճեան
Արժ. Տ. Յովհաննէս քահանայ
Վարժապետեան
Մանչեսթր. — Յակոբ էֆ. Բոլատեան
Պանսքումա. — Արմենակ էֆ. Ս. Մսերեան
Տրապզոն. — Սահակ էֆ. Էթմէքճեան
Կէլիպօլու — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան
Մանիսա. — Մկրտիչ էֆ. Էրկանեան
Աֆիոն-Գարա-Հիսար. — Արտաշէս էֆ. Հալսլեան

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Մագրի-Դիւղ, Պօղոս էֆ. Աղնաւորեանի խանութը,
Գատը-Դիւղ, Լեւոն էֆ. Չպուքճեան Դեղարանը,
Բերա, Մեծ փողոց Դառնիկ էֆ. Կիւլէրեանի խանութը: